ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԸՆԴՈՒՆԵՑ ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ԳԾՈՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻՆ

Հուլիսի 27-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Միջուկային էներգիայի գծով միջազգային գործակալության (ՄԱԳԱՏԷ) տնօրեն Մոհամմադ Էլ Բարադեյին:

Ողջունելով հարգարժան հյուրի այցը Մայր Աթոռ՝ Նորին Սրբությունը ներկայացրեց Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հիմնադրության պատմությունը, առաքելությունը հայ ժողովրդի կյանքում և Եկեղեցու առջև ներկայիս ծառացած մարտահրավերները:

Նորին Սրբությունը նաև գոհունակությամբ անդրադարձավ Հայաստանի և ՄԱԳԱՏԷ-ի միջև ձևավորված արդյունավետ համագործակցությանը՝ նշելով, թե որքան կենսական է Հայաստանի համար Մեծամորի ատոմակայանի անխափան և անվտանգ աշխատանքը:

Մոհամմադ Էլ Բարադեյը, իր հերթին շնորհակալություն հայտնելով հանդիպման ընձեռված հնարավորության համար, Նորին Սրբությանը ներկայացրեց այցի նպատակն ու արդյունքները:

Հանդիպմանը նաև խոսվեց մարդկության առջև ծառացած վտանգների մասին, որոնց հաղթահարման գործում կարևոր նկատվեցին կրոնապետերի գործունեությունը և միջկրոնական երկխոսությունները՝ ուղղված հասարակության մեջ բարոյական արժեքների ամրապնդմանը ու արմատավորմանը: «Բարոյական արժեքների անկումը նույնքան, եթե ոչ ավելի, վտանգ է սպառնում մարդկությանը, որքան ատոմային ուժը»,- նշեց Ամենայն Հայոց Հայրապետը՝ ընդգծելով, որ միայն «մարդը՝ որպես արարչագործության գերագույն արժեք» ընկալման ձևավորմամբ է, որ հնարավոր է կանխել մարդկության համար անցանկալի և վտանգավոր զարգացումները: